

- առաջարկվող տպրանքների և ծառայությունների մասին մանրամասն տեղեկատվություն,
- գնորդի հետ ինտերակտիվ շփում և հարցմանը ակնթարթային արձագանքման հնարավորություն,
- ակնթարթային վճարման հնարավորություն և «իմպուլսիվ» գնումների խթանում, այսինքն պահի ազդեցության տակ կատարված գնումների հնարավորություն
- տարածքի վարձակալության և աշխատակազմի ծախսերի կրճատում,
- միջնորդների շրջանցման հնարավորություն և այլն:

Դրա հետ մեկտեղ էլեկտրոնային առևտուրը զերծ չէ թերություններից, որոնք ամենից առաջ պայմանավորված են վաճառողի և գնորդի միջև անմիջական մարդկային հարաբերությունների բացակայությամբ: Էլեկտրոնային առևտուրը, բացի դրական և բացասական նշված կողմերից, առաջացնում է մարդկային հասարակության զարգացման ընթացքում ձևավորված մի շարք արդեն սովորական դարձած հարաբերությունների բացասման փիլիսոփայական, սոցիալ-հոգեբանական, իրավական, տնտեսական և զուտ տեխնիկական բնույթի հիմնախնդիրներ:

ՆՎԱՐԴ ԽԱՉԱՏՐՑԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Զոբանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԲԻՋՆԵՍԻ ՏՆՏԵՍԱԴՐԱՎԱԿԱՆ ԴԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Վերջին երկու տասնամյակներում էլեկտրոնային բիզնեսի, այդ թվում նաև էլեկտրոնային առևտրի զարգացման առաջանցիկ տեմպերը բնականորեն գրավել են բազմաթիվ գիտնականների և մասնագետների ուշադրությունը: Որպես նոր երևույթ այն այնքան առանձնահատուկ է, որ բազմաթիվ հետազոտողներ խուսափում են միանշանակ կարծիք հայտնել երևույթի այս կամ այն հիմնախնդրի վերաբերյալ: Եվ իրոք, էլեկտրոնային բիզնեսը գործունեության այն տեսակն է, որի կայացումը պահանջեց բազմաթիվ գիտական դիսցիպլինների, պետական և մասնավոր, միջազգային և տեղական կառույցների համագործակցություն: Արդյունքում ձևավորվեց մինչ այդ հանրությանը անհայտ նոր երևույթ, որը աննկարագրելի կերպով փոխեց տնտեսական գործունեության իրականացման ավանդական պատկերացումները՝ նոր հարթություն տեղափոխելով շուկայի կառուցվածքի, աշխարհագրական սահմանափակումների, մրցակցության ձևերի, գովազդային արշավների մասին մի շարք կարծրացած պատկերացումներ: Ամենայն վստահությամբ կարելի է պնդել, որ էլեկտրոնային բիզնեսը հանդիսանում է գլոբալ տնտեսությունը բնորոշող ամենատիպիկ բաղադրիչներից մեկը:

Կասկած չկա, որ բազմաթիվ երկրներում էլեկտրոնային բիզնեսի զարգացման մակարդակը անհամեմատելի առաջ է Հայաստանում այդ ոլորտի զարգացման կամ կայացման ներկայիս մակարդակից: Այդ երկրների թվին են դասվում ինչպես բոլոր զարգացած երկրները, այնպես էլ բազմաթիվ զարգացող, ինչպես նաև ետխորհրդային տարածաշրջանի մի շարք երկրներ: Չնայած ինտերնետը ի սկզբանե ստեղծվեց որպես ոչ առևտրային նախագիծ, սակայն գործարարները շատ արագ գնահատեցին դրա ընձեռած բազմաթիվ հնարավորությունները և սկսեցին տնտեսական գործունեություն ծավալել դրա միջոցով, և որքան շատացան էլեկտրոնային բիզնեսի տարատեսակները, ընդլայնվեցին ինտերնետի միջոցով մատուցվող ծառայությունները, նույնքան էլ շատացան տարբեր իրավատնտեսական հարցադրումները:

Էլեկտրոնային բիզնեսի առաջացումը և հետագա ընդլայնումը, մի կողմից նպաստելով սպառողների հարմարավետությանը և բիզնեսի տրանսակցիոն ծախսերի նվազմանը, մյուս կողմից իրավունքի գիտության մեջ առաջացրեց բազմաթիվ տեսական և գործնական խնդիրներ, որոնք շուտափույթ լուծման կարիք ունեն: Պարզվեց, որ իրավական մեխանիզմները, որոնք

ստեղծվել էին ավանդական ձեռնարկատիրության իրավական կարգավորման համար, կիրառելի չեն այն հարաբերությունների կարգավորման համար, որոնք առաջանում են ինտերնետում բիզնես հարաբերությունների կարգավորման համար: Նման դժվարություններ առաջացան իրավունքի միաժամանակ մի քանի բաժիններում՝ քաղաքացիական, ֆինանսական, հարկային և այլն: Էլեկտրոնային բիզնեսի, այդ թվում նաև էլեկտրոնային առևտրի իրավատնտեսական հիմնախնդիրների վերաբերյալ տեսակետներն այնքան առանձնահատուկ են, որ որոշ հետազոտողներ կանխատեսում են իրավունքի նոր տարատեսակի՝ էլեկտրոնային բիզնեսի իրավունքի առաջացում¹:

Ընդհանուր առմամբ, էլեկտրոնային բիզնեսի տնտեսաիրավական կարևորագույն հիմնախնդիրներից են.

- էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանակմամբ կնքված պայմանագրերի հավաստիության հետ կապված հիմնախնդիրներ: Սովորաբար գործարքի վերաբերյալ պայմանագիրը կնքվում է էլեկտրոնային տեսքով փոխանցված պայմանագրի ձևով: Սակայն այս դեպքում կարող են առաջ գալ տարաբնույթ մեկնաբանություններ այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են պայմանագրի կնքման պահը և վայրը, պայմանագրի տարբեր օրինակների իրավական կարգավիճակը, իսկ եթե գործարքի մասնակիցները տարբեր երկրներում են գրանցված, նաև առաջ են գալիս տարբեր երկրների օրենսդրության համատեղելիության խնդիրներ, հարկային և մաքսային պարտավորությունների իրականացման խնդիրներ և այլն:

- ինտերնետի և այլ համակարգչային ցանցերի միջոցով փոխանցվող տեղեկատվության բովանդակության հեղինակային պաշտպանության հետ կապված հիմնախնդիրներ: Էլեկտրոնային տարբերակով տարածվող ապրանքները կառող են հեշտությամբ կրկնօրինակվել, այդ պատճառով, հատկապես մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության հարցը հրատապ է: Մինչ օրս էլեկտրոնային տեսքով ներկայացված տեղեկատվության ապօրինի կրկնօրինակման, փոփոխման և ոչ նպատակային օգտագործման բացառման համար գործուն մեխանիզմներ մշակված չեն: Հայտնի է, որ երաժշտության, տեսաֆիլմերի, տարբեր ծրագրերի «սփրատության» հետ կապված հանցագործությունների մեծ մասը կապված է ինտերնետի միջոցով դրանց փոխանցման հետ:

- էլեկտրոնային վճարումների հետ կապված հիմնախնդիրներ: Էլեկտրոնային տեսքով ներկայացված ապրանքների առևտրին բնութագրական է էլեկտրոնային վճարումից անմիջապես հետո ապրանքի ստացումը: Սակայն այս դեպքում գնորդը կարող է վճարումը կատարել գողացված բանկային քարտի տվյալներով, որի դեպքում իրական քարտատերը հետագայում կարող է հայտ ներկայացնել բանկ և ետ պահանջել վճարված գումարը, իսկ էլեկտրոնային ապրանքի վաճառողը զրկված է վաճառված ապրանքի ետպահանջի հնարավորությունից:

- էլեկտրոնային վճարամիջոցների հետ կապված հիմնախնդիրներ: Ներկայումս աշխարհում գործում են բազմաթիվ էլեկտրոնային փողերի համակարգեր: Նման համակարգերը հնարավորություն են տալիս վճարումներ իրականացնել և ստանալ «վիրտուալ» դրամանիշերի տեսքով, ինչը հնարավորություն է տալիս խուսափել բանկային միջնորդավճարներից: Այս և մի շարք այլ առավելություններից բացի էլեկտրոնային փողերը կարող են կիրառվել անանուն ձևով, ինչը այնպիսի վտանգներ է պարունակում, ինչպիսիք են արգելված ապրանքատեսակների վաճառքը և ծառայությունների մատուցումը, հարկային մարմիններից թաքնվելը, փողերի լվացումը և այլն:

- էլեկտրոնային բիզնեսի հարկման հետ կապված հիմնախնդիրներ: Հաճախ էլեկտրոնային գործարքի մասնակիցները տարբեր երկրներից են, իսկ երբեմն ընդհանրապես անհմար է լինում պարզել գործարքի մասնակիցների աշխարհագրական պատկանելիությունը կամ ինքնությունը, ինչը թույլ չի տալիս հարկային մարմիններին սուբյեկտների տնտեսական գործունեության նկատմամբ կիրառել հարկային վարչարարություն: Դրան նպաստում է նաև

¹ "Введение в право электронной коммерции" Андрей Шамраев Бизнес-онлайн, № 4, 2000.

այն հանգամանքը, որ վաճառված ապրանքը կարող է լինել ոչ նյութական, և դրա՝ մաքսային սահմանը հատելու փաստը և ըստ այդմ հսկողություն իրականացնելը նույնպես խիստ դժվար է: Դեռ ավելին, գոյություն չունի հստակ մեխանիզմ որևէ համակարգչային ծրագրի և էլեկտրոնային տեսքով ներկայացվող ապրանքի մաքսային արժեքի որոշման համար: Համակարգչային ծրագրի արժեքը հարյուրավոր, նույնիսկ հազարավոր անգամ կարող է գերազանցել նյութական կրիչի, օրինակ լազերային սկավառակի արժեքը: Նման հանգամանքը դժվարացնում է արտահանման և ներմուծման մաքսային կարգավորումը, քանի որ արտահանման ժամանակ միշտ խթան կա ներկայացնելու ավելի մաքսային արժեքը, իսկ ներմուծման ժամանակ՝ պակաս:

• Մշակույթի, ավանդույթների հետ կապված հիմնախնդիրներ: Ինչպես նշվել է, ինտերնետի գլոբալ բնույթը հնարավորություն է տալիս բիզնես վարել աշխարհի ցանկացած կետում գտնվող ընկերության հետ նույնպիսի հեշտությամբ, ինչպես նույն փողոցի վրա գտնվող ընկերության հետ: Սակայն այստեղ ծագում են մի շարք խնդիրներ: Օրինակ՝ ինչպես կարող են տարբեր երկրամասերում գտնվող գործարքի մասնակիցները վստահ լինել միմյանց իսկապես գոյություն ունենալու մասին կամ էլ նրանց կողմից առաջարկվող ծառայություններում և ապրանքներում, ինչպես ընկերությունը կարող է հասկանալ աշխարհի մեկ այլ ծայրում գտնվող բիզնեսի վարման ավանդույթները և կանոնները:

• Գաղտնիություն և անվտանգություն: Էլեկտրոնային առևտրի վարումը բաց ցանցերում պահանջում է այնպիսի արդյունավետ և վստահելի մեխանիզմների առկայություն, որոնք կերաշխավորեն դրա բոլոր մասնակիցների անվտանգությունը: Այդ մեխանիզմները պետք է ապահովեն գաղտնիության և ինքնության հաստատման այնպիսի համակարգեր, որը հնարավորություն կտա համոզվել մյուս կողմի ինքնությունում և երաշխավորել, որ կողմերը արդյունքում չեն կարողանա ժխտել իրենց մասնակցությունը գործարքում:

Նման իրավական և տնտեսական բնույթի հիմնախնդիրների լուծումը ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական մեծ կարևորություն: Պետական ֆինանսների տեսանկյունից նշված բազմաթիվ իրավական կարգավորման կարիք ունեցող հիմնախնդիրներից առավել կարևորը էլեկտրոնային բիզնեսի հարկման վերաբերյալ իրավական և տնտեսական հիմնախնդիրների լուծումն է, մասնավորապես, եթե հաշվի առնենք, որ աշխարհում մեծ եղանակով ավելի ու ավելի շատ գործարքներ են իրականացվում, իսկ շրջանառվող ֆինանսական միջոցները՝ հաստատում կայուն բարձր տեմպեր ունեն: Հարկման իրավական կարգավորումը, եթե հաշվի չառնի ոլորտի տեխնիկական և տնտեսական առանձնահատկությունները, հնարավորություն կտա գործարարներին այնպես կազմակերպել գործունեությունը, որպեսզի հնարավոր լինի թաքցնել իրական շրջանառությունները, գործարքի բովանդակությունը՝ և հետևաբար, խուսափել հարկեր վճարելուց: Դա կարող է բերել բյուջետային մուտքերի նվազման, ինչն էլ նվազեցնում է պետության՝ իր կողմից ստանձնած գործառնությունների արդյունավետ իրականացումը:

Իրավիճակի լրջությունը արդեն վաղուց գիտակցել են բոլոր զարգացած երկրներում: Բնականաբար, գիտակցել են ոչ այն պատճառով, որ ավելի հնարամիտ են, այլ այն պատճառով, որ հենց զարգացած երկրներում է կենտրոնացված էլեկտրոնային առևտրի հիմնական ծավալը, և դեռ ավելին, հարկերից խուսափելու համար հաճախ օգտագործվում են հենց զարգացող և թույլ զարգացած երկրների օրենսդրական բացերը, քանի որ մեծ հնարավորություն տալիս է էլեկտրոնային բիզնեսի գլոբալ բնույթը: Իրավիճակի լուծման ուղիների փնտրտուքի ժամանակ մասնագետները ստիպված էին ոչ միայն պարզաբանել գործունեության մոր տեսակի հետ առաջ եկած հասկացությունների սահմանման, այլև հարկման իրավական կարգավորման ավանդական մոտեցումների վերանայման և փոփոխման անհրաժեշտությունը, այնպիսիք, ինչպիսիք են հասկացությունների համակարգի սահմանումը, էլեկտրոնային բիզնեսի շրջանակներում իրականացվող գործարքների իրավական և տնտեսական դասակարգումը, ինչպես նաև հարկման սկզբունքների մշակումը: